Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

«Լանթերման-Պետրիս-Շորթի (LPS, Lanterman-Petris-Short) օրենքը» հասկանալը

Հրատ.՝ #5608.10-Armenian

Գլուխ 3. Ձեր իրավունքները՝ LPS օրենքի ներքո

«Լանթերման-Պետրիս-Շորթի օրենքի» (LPS) և այլ օրենքների ներքո, նույնիսկ եթե Դուք հարկադիր բուժում եք ստանում, Դուք հիվանդի որոշ իրավունքներ ունեք: Օրինակ՝ ըստ կանոնադրական ակտի Դուք անհատականացված բուժման իրավունք ունեք, որը Ձեր անձնական ազատություններից ամենաքիչ սահմանափակն է: Դուք իրավունք ունեք՝ հեռախոս օգտագործել և հյուրեր ունենալ: WIC § 5325. Դուք նաև ցանկացած այլ քաղաքացու պես միևնույն նահանգային և դաշնային իրավունքներով եք օժտված, երբ բուժում եք ստանում, այդ թվում բուժում ստանալու իրավունքը և արժանապատիվ վերաբերմունք ստանալու իրավունքը: WIC § 5325.1.

LPS-ի իրավունքների երկու տեսակ գոյություն ունի. (1) իրավունքներ, որոնք երբեք չեն կարող մերժվել. և (2) իրավունքներ, որոնք կարող են մերժվել, բայց միայն այն դեպքում, եթե «համապատասխան պատճառ» կա: Երբ իրավունքը համապատասխան պատճառի համար է մերժվում, այն պետք է մերժվի նվազագույն սահմանափակ ձևով: Ձեր իրավունքները, և այն, թե երբ դրանք կարող են մերժվել, նկարագրված են ստորև:

Հոգեկան առողջության հաստատությունները նույնպես պետք է համապատասխանեն հիվանդների իրավունքների

այնդրույթներին, որոնք սահմանված են Կալիֆորնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքում (WIC, Welfare & Institutions Code):

Մերժման ոչ ենթակա իրավունքներ

WIC § 5325.1-ը սահմանում է, որ «հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինքունեն այնոյն օրինական իրավունքները և պատասխանատվությունները, որոնք երաշխավորվում են մնացած բոլոր անձանց՝ ըստ Դաշնային սահմանադրության և օրենքների և ըստ Կալիֆորնիա նահանգի սահմանադրության և օրենքների, եթե առանձնահատուկ կերպով չեն սահմանափակվում դաշնային կամ նահագային օրենքով կամ կանոնակարգերով»:

Այս իրավունքները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Բուժման ծառայությունների իրավունք, որը խթանում է անձի ներուժը՝ անկախ գործելու համար: Բուժումն այնպես պետք է տրվի, որ նվազագույնս սահմանափակի անձի ազատությունը:
- Արժանապատվության, գաղտնիության և մարդկային խնամքի իրավունք:
- Վնասից զերծ լինելու իրավունք, այդ թվում անտեղի կամ չափից ավելի ֆիզիկական սահմանափակում, մեկուսացում, դեղերով բուժում, չարաշահում կամ անտեսում: Դեղերով բուժումը չպետք է որպես պատիժ օգտագործվի, աշխատակազմի հարմարավետության համար՝ որպես բուժման ծրագրի փոխարինող կամ այնքանակով, որը խոչընդոտում է բուժման ծրագրին:
- Անհապաղ բժշկական խնամքի և բուժման իրավունք:
- Կրոնական ազատության և գործելու իրավունքը:
- Պետական աջակցմամբ համապատասխան կրթական ծրագրերին մասնակցելու իրավունք:
- Սոցիալական շփման և համայնքային հասարակական իրադարձությունների մասնակցելու իրավունք:

- Ֆիզիկական վարժությունների ուժերը վերականգնելու հնարավորությունների իրավունք:
- Վտանգավոր գործողություններից զերծ լինելու ազատություն:
- Ուղեղի վիրահատությունը մերժելու իրավունք:
- Հիվանդի փաստաբանի հետ հանդիպելու և նրա ծառայություններն ստանալու իրավունք, ով ոչ մի ուղղակի կամ անուղղակի կլինիկական կամ վարչական պատասխանատվություն չունի այն անձի հանդեպ, ով հոգեկան առողջության ծառայություններ է ստանում:

Վերոնշյալ իրավունքները պատկանում են անձին, դրանց վրա չի ազդում հաշմանդամ անձանց խնամակալությունը և կիրառվում է՛ կամավոր և՛ ոչ հարկադիր բուժվող հիվանդների վրա: WIC §§ 5325, 5325.1:

Ինչպես նախապես քննարկվեց, WIC § 5325-ի ներքո որոշ իրավունքներ կարող են մերժվել, բայց միայն պատշաճ կերպով փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում, որտեղ համապատասխան պատճառ է ցույց տրվում: WIC § 5326. Սակայն, **այն իրավունքները, որոնք § 5325.1-ի ներքո են, չեն կարող կրճատվել**, իսկ դիտավորյալ խախտումների պատիժները ներառում են քաղաքացիական տուգանքներ և արտոնագրի չեղարկում, ինչպես նաև անհատական գործողություններ հաստատության դեմ՝ վնասների փոխհատուցում ստանալու համար: WIC § 5326.9(d)-(e):

Իրավունքների մերժում համապատասխան պատճառի համար

LPS օրենքի ներքո որոշ իրավունքներ կարող են մերժվել «համապատասխան պատճառի» համար, որը նշանակում է, որ հաստատությունը չի կարող Ձեր այդ իրավունքը մերժել՝ առանց ցույց տալու ընդամենը մի քանի սեղմ սահմանված բացառումներից առնվազն մեկը: Հետևյալն այն իրավունքների ցանկն է, որոնք կարող են մերժվել համապատասխան պատճառի համար: WIC § 5325.

- Իր սեփական հագուստը կրելու իրավունքը:
- Անձի սեփական անձնական գույքը պահելու և օգտագործելու իրավունքը, այդ թվում զուգարանի առարկաները՝ հիվանդին մատչելի վայրում:
- Անձի ողջամիտ քանակությամբ դրամ պահելու և այն փոքրիկ գնումների վրա ծախսելու իրավունք:
- Անձնական իրերը պահելու տարածքից օգտվելու իրավունք՝ իր անձնական օգտագործման նպատակով:
- Ամենօր այցելությունների հետ հանդիպելու իրավունք:
- Համապատասխան մատչելիություն ունենալու՝ հեռախոսներից օգտվելու համար, և՛ գաղտնի զանգեր կատարելու և ստանալու, և՛ իրենց ուղղված զանգերի համար:
- Նամակ գրելու համար անհրաժեշտություններից օգտվելու իրավունքը, այդ թվում դրոշմանիշներ, ինչպես նաև փոստով ուղարկելու և չբացված հաղորդակցություն ունենալու իրավունք:
- Այլ իրավունքներ, ինչպես սահմանված են կանոնակարգով:

Անձի ծնողը, խնամակալը կամ հոգաբարձուն չի կարող հրաժարվել WIC § 5325-ում նշված իրավունքներից:

Թեև հիվանդն իրավունք ունի մերժելու ջղաձգումներին առնչվող բուժումը, այդ իրավունքը կարող է մերժվել՝ սահմանափակ հանգամանքների ներքո, ինչպես սահմանված է WIC § 5326.7-ում:

Համապատասխան պատճառի մերժման պահանջները

Իրավունքը կամ համապատասխան պատճառը մերժելու համար, հաստատությունը պետք է ցույց տա, որ այն համապատասխան պատճառներ ունի հավատալու, որ՝

- Իրավունքի կրիառումը կարող է հիվանդի համար վնասակար լինել, կամ
- Այն կարող է լրջորեն խախտել այլոց իրավունքը, կամ
- Հաստատությունը լուրջ վնասներ կկրի, եթե այդ իրավունքը չմերժվի:

- ԵՎ այս երեք շահերը պաշտպանելու ավելի քիչ սահմանափակ մեթոդ չկա:

Եթե աշխատակազմը մերժի այս երեք իրավունքներից մեկը, մերժման պատճառը պետք է ուղղակիորեն առնչվի այն առանձնահատուկ իրավունքին, որը մերժվել է: Աշխատակազմը ոչ կարող է մերժել ձեր իրավունքները, ոպես պատիժ, ոչ էլ կարող է Ձեր իրավունքները որպես արտոնություն օգտագործել՝ լավ վերաբերմունքի համար: 9 C.C.R. § 865.2:

Հաստատության անխատակազմը երբեմն սխալությամբ հավատում է, որ նրանք կարող են մերժել իրավունքը՝ որպես ընդունման պայման, որպես բուժման ծրագրի մի մաս կամ որովհետև հիվանդը կամ մեկ այլ անձ, ով հանդես է գալիս հիվանդի անունից, համաձայնել է մերժմանը: Այս պատճառներից ոչ մեկը չի համապատասխանում համապատասխան պատճառի չափանիշին: Նահանգային օրենքները և կանոնակարգերը նշում են հետևյալը՝

- Իրավունքները չեն կարող մերժվել որպես ընդունման պայման, բուժման ծրագրի մի մաս կամ աշխատակազմի հարմարավետության համար, պատժի համար և ոչ էլ դրանց պետք է որպես արտոնության վերաբերվել, որը կարող է վաստակվել: 9 C.C.R. § 865.2(b)(c):
- Բուժման մեթոդները որևէ իրավունքի մերժում չեն կարող ներառել: 9 C.C.R. § 865.2(c):
- Հիվանդի, պատասխանատու բարեկամի, խնամակալի կամ հոգաբարձուի կողմից ստորագրված հրաժարումները չեն կարող օգտագործվել՝ իրավունք մերժելու համար: 9 C.C.R. § 865.2 (c). WIC § 5325.

Ծանուցում և իրավունքների մերժմանն առնչվող փաստաթղթեր

Հիվանդի իրավունքների յուրաքանչյուր մերժում, որն արվում է համապատասխան պատճառով, պետք է

փաստաթղթով հաստատվի բուժման արձանագրությունում: WIC § 5326. 9 C.C.R. § 865.3: Այս փաստաթղթավորումը պետք է անհապաղ կատարվի, և պետք է արվի անկախ մերժման ծանրությունից կամ հաճախականությունից: Գոյություն ունեն նաև առանձնահատուկ ուղեցույցներ՝ իրավունքների որևէ լրացուցիչ մերժումները փաստաթղթավորելու համար, մինչ հիվանդը առանձնացված և ձերբակալված է: 9 C.C.R. § 865.4(c):

Հիվանդները յուրաքանչյուր իրավունքի մերժման համար բացատրություն ստանալու իրավունք ունեն: Սա նշանակում է, որ ամեն անգամ հիվանդին պետք է ասվի, որ իրավունքը մերժվել է, և այն պատճառը, որի համար այդ իրավունքը մերժվել է: Հիվանդը նաև պետք է տեղեկացվի իր բուժման արձանագրությունում արված նշումների բովանդակության վերաբերյալ: 9 C.C.R., § 865.3:

Հիվանդի իրավունքների յուրաքանչյուր մերժման մասին պետք է նշվի հիվանդի բուժման արձանագրությունում: Փաստաթղթավորումը պետք է անհապաղ տեղի ունենա, երբ իրավունքը մերժվել է: Համաձայն 9 C.C.R., § 865.3-ի, փաստաթղթերը պետք է ներառեն հետևյալը՝

- Ամսաթիվը և ժամը, երբ իրավունքը մերժվել է.
- Առանձնահատուկ մերժված իրավունքը.
- Իրավունքի մերժման համապատասխան պատճառ, այդ թվում ավելի պակաս սահմանափակ ուղիները, որոնք հաշվի են առնվել կամ փորձվել են.
- Վերանայման ամսաթիվը, եթե մերժումը երկարաձգվել է 30 օրից ավելի.
- Մասնագետանձի ստորագրությունը, ով պատասխանատու է հաստատության համար կամ նրա պաշտոնում նշանակված անձը, ով լիազորել է իրավունքների մերժումը:

Իրավունքի վերականգնում

Երբ իրավունքը մերժվում է, այն պետք է վերականգնվի, երբ մերժման համապատասխան պատճառն այլևս գոյություն չունի: 9 C.C.R. §§ 865, և հետևյալը: Աշխատակազմը նաև պետք է հետևի Ձեր բուժման արձանագրության մեջ նշված յուրաքանչյուր մերժմանը: WIC § 5326: Երբ իրավունքը մերժվում է, աշխատակազմը պետք է նվազագույն սահմանափակ միջոցներից օգտվի՝ կառավարելու վարքագիծը, որը հանգեցրել է մերժման:

Սա նշանակում է, որ հաստատությունը պարտավոր է շարունակ գնահատել, թե արդյոք իրավունքի մերժման համար համապատասխան պատճառը գոյություն ունի, թե՞՝ ոչ: Եթե օրինակ հիվանդը մերժվել է իր սեփական հագուստները հագնելու իրավունքի համար՝ իրեն վնաստալու մտահոգության պատճառով, ապա աշխատակազմը պետք է նրան հաճախակի հնարավորություն տացցուցցտալու, որ նա կարող է առանցինքն իրեն վնասելու հագնել իր հագուստները:

Հիվանդների իրավունքների պաշտպանի հետ կապ հաստատելը

Հիվանդներն իրավունք ունեն հիվանդների իրավունքների պաշտպանին կամ կրճատ PRA-ին (PRA, Patients' Rights Advocate) հանդիպելու և նրա ծառայություններն ստանալու: WIC § 5325. PRA-ը կարող է օգնել՝ Ձեզ կրթելու Ձեր իրավունքների մասին և խորհուրդ տալ, թե Ձեր բուժման վերաբերյալ Դուք ինչ ընտրանքներ ունեք: PRA-ը ցանկացած հաստատությունից կամ կլինիկական անձնակազմից անկախ է աշխատում, և միայն հիվանդի շահերն է ներկայացնում:

Եթե Դուք երբևէ հարցեր ունենաք Ձեր իրավունքների կամ բուժման ընտրանքների մասին, օգնության համար Դուք կարող եք դիմել PRA-ին: Դուք կարող եք կապ հաստատել PRA-ի հետ՝ կամ՛ ուղղակիորեն դիմելով Ձեր հաստատության PRA գրասենյակ, կամ խնդրելով, որ աշխատակազմը կազմակերպի Ձեր և PRA-ի հանդիպումը:

PRA-ի հետ աշխատելիս՝ Դուք իրավունք ունեք անձնական հանդիպում ունենալ նրա հետ՝ Ձեզ մտահոգող ցանկացած խնդիր քննարկելու համար:

Եթե Դուք ի վիճակի չեք դիմելու Ձեր PRA-ին, Դուք կարող եք դիմել Կալիֆորնիայի հիվանդների իրավունքների պաշտպանության գրասենյակ՝ հետևյալ կոնտակտային տվյալներն օգտագործելով՝

California Office of Patients' Rights
1831 K Street
Sacramento, California 95811-4114
Հեռախոս՝ (916) 504-5810

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումների վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [Լրացնել հարցումը]

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության խնդրանքի ձևաթուղթ: Մնացածբոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝ http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html.